

ԱԼԲԱՆԻԱՅՈՒՄ

*)

Բարբարոսութեան մի ապշեցուցիչ անկիւն կայ հէնց Եւրոպայի մէջ: Այստեղ ոչ ճանապարհ և ոչ կամուրջ, ձիով գնալու համար պէտք է վնդրել սանատեղեր, գետակից անցնելու համար պէտք է ջուրը մտնել. այս անկիւնում կարելի է ապրել միայն զէնքը ձեռին՝ մշտական կութ մէջ: Ամեն մարդ իր ձեռքով է տեսնում իր դատը, և ոչ ոք ուրիշ օրէնք չ'ունի, բայց աւանդաբար հասած առվորութիւններից: Կառավարութիւն չը կայ, այլ միայն մի հեռաւոր վեհապետ՝ զասի լեգենդական, որը վճարում է իր իշխանութիւնը ճանաչելու համար, բայց երբէք հընազանդութիւն չէ պահանջում: Ժողովուրդը խօսում է մի լեզուով, որը գրել չը գիտէ, որովհետև ոչ այր-բէն ունի և ոչ քերականութիւն: Նա ճանաչում է երկու—երեք կրօն—մահմեդական, օրթօգօրս և կաթոլիկ, որ նա դաւանում է, և խառնում իրար հաւասար անտարերութեամբ: «Ո՛չ Աստուած, ոչ տէր» —այս դեկիլը ոչ մի ժողովրդի այնպէս չէ պատշաճում, ինչ-

*) Այս վերնագիր տակ Revue de Paris ամսագլի այս տարբայ մարտի № 1 տպագրուած է Ժօրժ-Թօլիսի հետաքրքրական յօդուածը: Ճանապարհորդական թուրքիկ նկարագիր է այս, որ տալիս ենք «Մուրմի» ընթերցողներին թէթէ կրծատումներով, որ սակայն բաւարար լոյս է սփուռմ ալբանացիների բարքերի վրայ, որոնցից որքան տուժում են եւրոպական Թիւրքիայի քրիստոնեաները: Մակեդոնական հարցի ներկայ եռուն շրջանում ամբողջ աշխարհի մամուլի մէջ շատ է խօսում Ըլբանիայի և առհասարակ ալբանացիների մասին: Յայտնի է՝ որ սրանց յանդզնութիւնը այնտեղ հասաւ, որ ոչ միայն զէմ էին Մակեդոնիայում որի է թիֆօրմի, այլ և Յամփի շաբունակ լնդղիմադրութիւն էին ցոյց տալիս Միտրօվիցում ուսւաց հիւպատոս Զչերբինայի հաստատուելուն, որին վերջերս փորձեցին նոյնիսկ սպանել:

պէս սրանց։ Այս ազգը, հիւսիսային ալբանացիներն են, և այդ անկիւնը՝ Բարձր-Ալբանիան։

*
*
*
1902 թ. մայիսի վերջին մենք երեք եւրոպացիներ մեկնեցինք իւսկուբից, որ թիւրքական վերջին քաղաքն է Մակեդոնիայում։

Զար-Դաղի ճանապարհով հետեւում էինք մի խաղաղասէր ժանդամի։ Մի վաճառական իր ջորին քշում էր իմ ձիու կողքից։ Սա մի սարօնիկցի հրէայ էր, մի խղճալի արարած։ Նա խօսում էր ցած ձայնով՝ վախենալով արձագանք հանել արանետի երկու կողմերի ժայռերի մէջ։

— Ափսոս անցած լաւ ժամանակները, ասում էր նա. Սալօնիկի մեր առեւտրական խոչոր աները արդիւնաւէտ գործ էին տեսնում Ալբանիայում։ Ալբանքները մտնում էին ամեն տեղ, թէ Ալբանիա և թէ Մակեդոնիա՝ դաշտով կամ լեռներով, թէ ալբանական Դիբրան, և թէ յունական Սերեսը։ Հրէայ և վալաք վաճառականները գիշեր ցերեկ ձիու վրայ թափառում էին առանց իրանց կեանքը վտանգի ենթարկելու։ Այն ժամանակները առանց լուրջ պատճառի սպանութիւններ չէին լինում, և երբէք մարդ չէր սպանելու առանց իմանալու։ Թէ ինչի համար։ Ալբանական վանդետտան կիրառում էր կանոնաւորապէս, ինչպէս ուրիշ երկրներում արդարադատութիւնը։ Աւազակութիւնը ընդունուած սովորութիւնների կարգն էր անցած։ Վաճառականը իր քաղցր վարմունքով կարողանում էր հեռացնել զնդակը և գանակի հարուածքը։ Նա ենթակայ էր միմիայն իր կապոցից զրկուելու վտանգին։ Այժմ ամեն բան փոխուած է; Աւազակութիւնն այնպիսի կարերութիւն է ստացել և այն աստիճան անկանոն էկատարուում, որ էլ ոչ մի վաճառականութիւն զիմանալ չէ կարող սուլթան Արդիւլ-Ղամիդն այս երկիրն ապականեց, նա ալբանացիներին փաղաքչում է, հրաւիրում է որպէս իր անձնական թիւնապահներ և վերակացուներ իր կալուածների, սիրով ժանդարմ է շինում և բարձր պաշտօններ տալիս կամ սանձարձակ բաց թողնում Հին-Սերբիայի և Մակեդոնիայի վրայ։ Ահա թէ ինչու ալբանացիք այժմ գոյութեան երկու միջոց են ճանաչում, առաջին՝ զինուած գողութիւն, եթէ սովորական մահկանացուներ են և երկրորդ՝ կեղեցունն, երբ դառնում են պաշտօնեայ։

Վաճառականը կանգնեցնելով իր ջորին մի թմբի վրայ՝ մեկնեց ձեռքը դէպի ահազին և անձոռնի սարը։

— Իմ հայրը՝ շարունակեց նա, ոտի տակ է տուել բոլոր այս կողմերը, իւսկիւբից մինչև Դիբրա, երեսուն տարի շարու-

նաև նա բոլոր ցեղերի բէսսան *) էր վայելում: Եա իր ջորու վրայ տանում էր սպիտակ գլխարկների մի կօլեկցիա քառակուսի կամ բոլորակ, տափակ կամ երկար: Եւ մի ցեղից միւս ցեղն անցնելիս՝ շարունակ փոխում էր, իր զիմարկը, որովհետեւ լաւ ընդունուելու համար նա պարտաւոր էր իր յաճախորդների պէս գլուխը ծածկել: Եւ այսպիսով նա ամեն տեղ բէսսա ունէր:

Մինչդեռ ես այժմ հաղիւ համարձակւում եմ մինչև կալկանդելեն գնալ և դեռ էլի ինձ ապահով չեմ զգում:

—Այս ալբանացիք՝ ինչպէս երեւում է՝ խիստ վատացել են, հարցրի ես:

—Ե՞ն, պարհն, նրանք միշտ էլ չար են եղել, գոչեց իմ ուղեկիցը, բայց իսկոյն ձայնը ցածրացրեց և կարծես փոշմանեց անկեղծութեան այդ չափազանցութեան համար: Նրանք առաջ էլ չար էին, բայց քանի որ չէին վարակուել թիւրքական նենազաւորութեամբ, խօսքի և պատրի տէր մարդիկ էին, գոնէ կարելի էր լաւ ընծաներով սրտերը շահել: Այժմ նրանք միայն գիտեն խարել և սպանել: Դիբրայի ալբանացիք սպանում են կողովակելու համար, դիմակօֆցիք սպանում են փանատիկոսութիւնից, իսկեկցիք՝ հաճոյքի համար, պրիզենցիք՝ երբ քէֆերը տեղը չէ, կալկանդելենցիք՝ իրանց շնած հրացանները փորձելու համար: Ալբանիայում բոլոր ալբանացիք սպանում են ցոյց տալու համար, որ իրանց իրանց տանն են, և որպէսզի օտարներն ընդունեն, որ նրանք իրաւոնք ունեն ապրելու իրանց ուղած ձեռվի Եւ Ալբանիայից գուրս, ամերական Մակեդոնիայում ալբանացիք սպանում են, որովհետեւ նրանք սովորութիւն չ'ունեն ճնշուել օտարների մօս, և սուլթանը նրանց վճարում է այս աշխատանքի համար:

* *

Իւսկերից ուղղակի Հին-Սերբիա գնալու համար պէտք է կտրել Զար-Դաղը Կասանիկի կիրճով, որ դուրս է գալիս երկաթուղու վրայ:

Բայց ալբանական իսկական ճանապարհը բարձրանում է գէպի Վարդարը՝ անցնելով Զար-Դաղի հարաւային փեշերով մինչև կալկանդելեն քաղաքը, որտեղից Զարի բարձրութիւններով ալբանացիք իջնում են Հին-Սերբիայի առաջին քաղաքը, Պրիզենդ: Մենք բանում ենք այս երկրորդ ուղին:

Երեք քառորդ ժամ հեռու Խովկիւրից, կալկանդելենի ճանապարհի վրայ հասնում ենք ալբանական երկրի սահմանին: Այս

*) Խաղաղութեան, հաշտութեան պայմանախօսքը:

սահմանն իրը խորհրդանշան ունի մի քանդուած կամուրջի սեան մնացորդը: Լեպենացը՝ միջըմրոստ գետակ, երեք տարի առաջ քանդել է կամրջի կամարը, թիւրքերն ի հարկէ՝ այն չեն շինի երբէք, որովհետև նրանք ոչինչ չեն ձեռնարկում եւրոպական թիւրքիայում, լաւ իմանալով՝ որ այնաեղ իրանց աշխատանքը մնալու է ուրիշներին: Միւս կողմից՝ եթէ շինեն էլ, ալբանացիք կը քանդեն այն կամուրջները, որոնք կապում են սուլթանի կայսրութիւնը իրանցի հետ: Պէտք է անցնենք ջրով: Քիչ հեռու մի շատ մեծ և սիրուն մէջիդ գծագրում է երկնքի տակ իր մինարէն և զմբէթքը Քսան քայլից սա էլ մէջիդ չէ, այլ մի աւրակ, երկար խոտերը փաթաթուել են զմբէթին: մինարէի վրայ արագիլի մի բոյն է տնկուած: Ալբանացիք արհամարհում են աղօթքի այս տունը, որովհետև թիւրքերն են շիներ:

Աւելի հեռու, արահետի եզրին քառասուն ձիաւորներ ցած են իջել ձիերից մի փոքրիկ սրճատան առաջ: Թիւրք նահանգապետն է ուղարկել այս ժանդարմեներին բռնելու զիւղացիներին, երբ նրանք կը վերադառնան իւսկիւրից քաշկները լի, նրանցից ապրանքների վրայ զրուած հարկը շորթելու համար:

Ժանդարմեների այս խմբի մէջ զուր է թիւրքեր սրոնել փոքրիկ աչքերի արանքում զտնուող իրանց փոքրիկ, կողմրքթով, դուրս ցցուած այտերով, մեծ և երկար իրանով՝ խիստ կարծ ուսների վրայ: Այստեղ բոլորը կատաղիներ են, ուսկրուու ջլուտ, զիշակեր թռչնի գլխով երկար պարանոցի վրայ, Քիթը կեռ՝ մանդաղաձե բեխերի արանքում, յօնքերի ծայրերը բեխերի պէս ցցուած, փայլուն ու խոր աչքեր, մեծ, ցցուած ականջներ, դայլացին հրաշալի ատամեներ, բոլոր այս ժանդարմեները ալբանացիներ են: Մինչև իսկ Ալբանիայի Հեմքին թիւրքը այժմ՝ միայն ալբանացի կարող է ուղարկել սատիկանական գործերի համար:

Վեց ժամուայ ճանապարհից յետոյ երեսում է Կալկանդելենը հարթութեան մէջ՝ Զար լեռնաշղթայի հանդէպ: Քաջափի կէսը փակուած է մի կիրճի մէջ: Կալկանդելենը ունի հրաշալի խնձորենիներ, բայց նա էլ աւելի յայտնի է իր հրացաններով: Սա մի զինարան է, ուր ալբանացիք հաստատել են զէնքի մեծ արդիւնագործութիւն: Կալկանդելենն այսպիսով մատակարարում է սուլթանի սեղանին խնձոր և իւրաքանչիւր ալբանացուն զէնք: Ամեն տարի սուլթանը Ստամբուլից հրաման է ուղարկում փակել այդ գաղտնի զինագործարանները, բայց աւելի շուտ խնձորենիները կը դադարեն պտուղ տալ, քան թէ այդ հրամանը կ'իրագործուի:

Քաղաքի հանդէպ՝ մէկը միւսից հեռու, բէյերը, որոնք այս երկրի բարօններն են, կալաներ ունեն, որ նրանց գղեակնե-

րըն են: Կալանքառանկիւնի, իւրաքանչեւր անկիւնում մի աշաբակ, և ամբողջ շինքն ունի մի հատ երկաթէ դուռ: Պարսպի ներսում պարտիզով շրջապատուած երեք բնակարան կայ, մէկը տղամարդկանց մէկը կանանց և երրորդը հիւրերի համար: Իսկ մի կողմում էլ ախոռն է և յարդանոցը: Այստեղ ամեն ինչ կայ պաշարման դիմադրելու համար: Վտանգի ժամանակ բէյը փակւում է իր ընտանիքի, կլիենաների և հօտերի հետ: Այս պարփակների չորս աշտարակների և իր երկաթէ դրան յետեւում նա կարող է դիմանալ մի քանի տարի:

Այս կալաները ամրութիւններ են կալկանդելենի հարաւում Մակեդոնիայի ճանապարհի դէմ և ամեն մի յարձակման առաջը կարող են առնել: Կալաների յետեւում քաղաքը կը ծոված է կիրճի մոււրքի առաջ, որտեղից բաց է մնում նահանգի ճանապարհը դէպի լեռները: Քաղաքի յետեւում լեռնային այս ճանապարհը պաշտպանելու համար մի բէյ շինել էր մի ժամանակ բարձր դիրքերի վրայ մի ահանի բերդ, որ այժմ աւերակների մի կոյտ է միայն բէյերը սիրով այն կը վերաշնէին, եթէ պէտք լինէր: Առայժմ նրանք պաշտպանողական վիճակի մէջ չեն դրուած, սուլթանը նրանց նեղելու մտադրութիւն չ'ունի, նու նրանց է թողել քաղաքը և դաշտավայրը՝ պարագ գնելով վրաները պահպանել յեռների դուռը և Հին-Սերբիայի ճանապարհը: Այս բէյերի զլիաւորը կարող է շահագործել վարդար դեմի բոլոր վերին աւազանը:

Կալկանդելենի այս մեծ բէյը, որ մի նշանաւոր անձնաւորութիւն է, կոչւում է Մհամմէդ: Սուլթանը նրան ուղարկել է Սիրիայի Հալեպ քաղաքը առաջնակարգ կարեորութիւն ունեցող պատճառներով: Համեստաբար, բայց հպարտութեամբ են տալիս Մհամմէդի վասաները նրա թշնամու, հակառակորդի, նրա աքսորի հեղինակի անունը, և դա ինքը՝ Ֆրանց-Յովաչի կայսրն է: Նրանք հաւատացած են, որ աշխարհն այս քան մեծ չէր, որ կարողանար պարտկել Բարձր-Վարդարի գըլխաւորին և կայսր-թագաւորին: Անհրաժեշտ էր, որ մէկը կամ միւսը ոչնչանայ: Աւելի գօրելը յաղթանակեց: Պարտութիւն կրողը տուժում է: չէ որ այս է պատերազմի օրէնքը: Մհամմէդի պատմութիւնը հետաքրքիր է: ահա մանրամասնութիւնները:—

* *

Կալկանդալենում աւազակի արհեստը լաւ արհեստ է: Ալրանացիք այդ բանում խիստ առաջազիմում են: Կալկանդալենը պատօնների հին Տետէօվոն է, որի բնակիցների երեք քառորդը մի քսան տարի առաջ բուլղարներ, սերբեր և վալախներ էին: Մարտ, 1903,

Այժմ շատ քիչ բան է մնում այս քրիստոնեայ ժողովրդից, որին հալածել են ալբանացիք։ Այս անկիւնում ալբանացիներին բը-նակեցրել է Աբգիւլ-Համբիլը։ Սուլթանը նրանց է թողնում ճա-նապարհները. իսկ երբ մարդ հսկում է ճանապարհների վրայ, նա իրաւունք ունի և հարկ վերցնել անցորդներից։ Ա-մեն տարի մակեդոնացի բուլղարներն ու սերբերը Դիբ-րայում Վարդար գետի ընթացքով մնե թւով իջնում են Խւ-կիւր՝ երկաթուղով Սօֆիա և Ֆիլիպազօպօլ գնալու համար, ուր նրանք աշխատում են լաւ եղանակներին։ Ալբանացիք, որ նը-րանց տեսնում են գարնանը ցած իջնելիս, սպասում են նրանց վերադարձին աշնանը. Խեղձ բռվլղարները այս ժամանակ զուր են աշխատում հազար ու մի խորամանկութեամբ փախցնել ի-րանց փոքրիկ անտեսութիւնը. Կալկանդելէնի ալբանացիք վար-պետ մարդիկ են, և նրանցից ոչինչ խուսափում։ Սև Դրե-նի այս ճանապարհը մի մահարեր անկիւն է, ոռուսական մի հիւսատոս երեք տարի առաջ կարողացաւ Դիբրա բարձրանալ հարիւր յիսուն ձիաւորներով շրջապատուած։

Պինդոսից մինչև Զարդաղ ալբանացիներին տիրելով Մհամեդը հարստացել էր։ Նա ունէր մինչև երեք հազար հրա-ցան և ութ ժամում կարող էր ընկնել Խւսկիւրի վրայ, որը նա պահում էր իր ձեռքի տակ. Մակեդոնիայի, Հին-Սերբիայի և Ալբանիայի երեք քառորդի բանալին իր ձեռքումն էր։ Մհամ-մէդն այսպիսով ունէր այստեղ մի խական թագաւորութիւն։ Բայց ինչպէս ամեն ալբանացի, լեռնալին այս թագաւորը իր առնական արտաքինի տակ ծածկում էր երխայական ճաշակ սիրուն համազգեստների համար և մի բուրժուական տենչ տիտղոսների, աստիճանների և սարկական պատիների համար։ Այս ալբանացիք, որ այնպէս քիչ են կապուած իսլամին, երբ իրանց մուսուլման են ասում, և այնպէս քիչ հաւատարիմ քը-րիստոնէութեան, երբ իրանց քրիստոնեայ են համարում, սար-եակների պէս վազում են դէպի այս ամենը՝ ինչ փայլում է։ Կատաղի կամ ըմբոստ՝ կառավարութեան դէմ, անտարբեր թէ անպատկառ որեւէ աստծու կամ հայրենիքի գաղափարի հանդէպ, նրանք ընկնում են էկստազի մէջ ամենափոքր զինուորական տես-նելիս։ Մի ուսազիբր, մի ոսկէ զրամ, որ փայլում է, քաշում է նրանց դէպի թակարգը, և սուլթանը որպէս լաւ որսորդ՝ դիտէ այս միամիտներին սառչի վրայ քաշէլ։ Առանց այս ինստինկտի ալբանացի բոլոր Մհամեդները վազուց կը լինէին Մակեդո-նիայի տէրերը, ինչպէս մի ժամանակ Մէհմէդ-Ալին եղիպատոսի տէր գարձաւ։

Աբգիւլ-Համբիլը, որին մեր Մհամեդն սկսել էր անհան-

դըստացնել, առաջարկեց փաշայի տիտղոս, յետոյ նրան տուեց ժամդարմերիայի մէջ մի բարձր աստիճան։ Ժանդարմի համազգեստով աւագակը թիւրքական օրէնքների արամազրութեան տակ զրեց իր հին փորձառութիւնը։ Նրան յանձնարարուեց հսկել Սալօնիկի վիլայէթի ապահովութեան վրայ, որը շատ հեռու չէ իր իշխանութիւնից։ Ճանապարհներ փակելու արհեստին լաւ ծանօթ Մհամմէջը կարողացաւ աւազակների բոլոր խորամանկութիւններն ի գերև հանել։ Յետոյ որպէս լաւ պաշտօնեայ, որ հոգում է իր առաջ գնալու մասին և իր ծննդավարին մօտ լինելու համար, նաև կամայ թէ ակամայ իրան նըշանակել տուեց իւսկիւրի ժանդարմերիայի շեֆ։ Այն ժամանակ այս մարդը, որ իր ձեռին ունէր Բարձր-Վարդարը, բոլոր ալլանացիներին և մինոյն ժամանակ սուլթանի ժանդարմերին, դարձաւ անսահման իշխանութեան տէր։ Մակեդոնիայի մի երրորդը նրա օրէնքից գուրս ուրիշ օրէնք չէր ճանաչում։ Պօլսում միայն արձանագրում էին նրա կամքը։ Մհամմէջ փաշան կարգում և արձակում էր պաշտօնեաներին, և երբ իւսկիւրի որեւէ նահանդապետ դադարում էր իրան գուր գալուց, նա տալիս էր նրան տասն օր երկրից հեռանալու համար։

Համբերութեամբ, առանց զարոյթի Արդիւլ-Համբերը և իլ-դիզ-Քէօսկի նրբամիտ նենգաւորները շարունակելով խոնարհուել Մհամմէջի կամքի առաջ սպասում էին այն ժամին, երբ իսխա ձգուած լարը կը կտրուի։ Մի գեղեցիկ օր Մհամմէջը նրանց հասուն թւաց աքսորի համար, և հոչակաւոր ժանդարմը կանչուեց Պօլիս։ Նա եկաւ։ Նրան շքանշաններ տուին, անուաննեցին գեներալ, ոսկով ծածկեցին և յայտարարեցին զոհ մեծ պետութիւնների դաւադրութեան։ Նրան հասկացրին, որ ամբողջ Եւրոպան միացած՝ զլուխ ունենալով ֆրանց-Յովսէֆ կայսրը, պահանջում է կամ նրա գլուխը կամ աքսորը։ Եւ Եւրոպացիների վրէժինդրութիւնից ազատելու համար է, այսպէս ասացին, որ նրան պատիւներով ուղարկում են Սիրիայի Հալեպ քաղաքը։ Մհամմէջ փաշան մեկնեց առանց բողոքելու, նկատելով՝ որ կայսրը, որի զոհն էր կարծում իրան, արժանի հակառակորդ է։

* *

Կալկանդենի հանդէպ մենք հիւր ենք ըէկտաշի դէր-վիշներին։ Քաղաքից մի կիլոմետր հեռու, ծաղկասպատ գերեզմանատան յետեւում, անտառապատ լեռների ստորոտումն է, ուր բարի դէրվիշները ծածկում են հաստատուն պարիսպների յետեւում իրանց ծառաստանները, արտերը և այդիները։ Սկզբից դժուար է կարծել, թէ սրանք պատկանում են մի մուրացիկ կարգի։ Սրտաքուստ նրանց թերթէ-ները (կանք) նմա-

նում են պատնէներով շրջապատուած բանակատեղի: Պատերի կողերին լայն բացուած խորչեր, կատարներին առանաւոր բացուածք. գրան վրայ մի քանի աշտարակներ, որոնք միացած են փայտէ կամուրջով պտոյտի ճանապարհի համար: Դրան չեմքին, երբ հիւրը գալիս է ապաստան ինդրելու, խոնարհում են սպիտակագողեստ կրօնաւորները, որոնց զիսի փաթոյթը ծէսի համաձայն տասներկու ծալք ունի:

Պարիսպների ներսում հարիւրի չափ ինձորենիներ մեկնում էին իրանց ծաղկած ծիւղերը արեի վերջին ճառագայթներին: Չորս կողմում սպիտակ շաւիղներ և փոքրիկ, բարակ առուակներ, որոնք հոսում են մուգ կանաչի միջով: Եյս ծառաստանի շուրջը մի փոքրիկ ազարակ, մի փոքրիկ մէջիդ, փոքրիկ քէսուկներ կոլոր և ոսկեզօծ անկիւններով, արենելքի մի Տրիանջն, որ փռուած էր վարդերի առատութեան մէջ: Ահմէդ-Ալին, եղբայրութեան չեխոր, գէրվիշների քարան մեզ ընդունելու համար թողեց իր առջևի ամանը երակով լի, որ նա ուտում էր, և առաջնորդեց իր հիւրերին այն քէսուկը, որ նայում է ամբողջ շինութեանը: Սոխակները, թիւրքերի այնքան սիրած «ըիւլըիլնիերը» սկսեցին երգել. լուսատափները թոշկուում էին ինձորենիների տակ: Բարան ինձ ասում է. «Դու այստեղ կը գտնես ալբանական խաղաղութիւնը»:

Հաջի-Բէկաչ Խօրասանին՝ այս կարդի հիմնադիրը՝ ապրում էր XIV-րդ դարում Օրխանի պալատում: Նա բարի էր նրանց համար, ում սիրում էր և անողորմ գէսփի թշնամիները: Նա օրհնեց առաջին ենիշերիներին, և իր աշակերտները չորս դար շարունակ ձեր համար ենիշերիական զնդի սնդամներ էին համարւում: Ալբանացի ենիշերիները իրանց երկիրը բերին սուրբ մարդու անունը Սուսուլբան ալբանացիների կէսը դարձաւ բէկաչ: Հերձուածի կրօնաւորները այժմ միայն մի քանի գերմիշներ են իրանց թեքքներում, մինչդեռ հետեօդները գտնուում են առեն տեղ:

Անօգուտ է կարծել, թէ ալբանացիների կրօնական խիստ թոյլ զգացրունքը ամրանում է այս կապով, միայն ալբանացին իրան աւելի լաւ «փոլամ» է կարծում, երբ նա «բէկաչ» է ուզում լինել սուրբ Բէկաչի ձեռքի տակ», ինչպէս ուրիշները (կաթոլիկները) ս. Թրանցիսկոսի: Սատանան սրանով ոչինչ չէ կորցնում, սա մի նախապաշարմունք է աւելացրած միւս նախապաշարմունքների վրայ, որոնք կամուր են ալբանական կրօնը: Շնորհիւ բէկաչիզմի՝ քաջ մարդիկ, որոնք չափչիում են լեռները հրացանն ուսերին, ահից գունատուում են մի նա-

պաստակ տեսնելիս, ինչպէս մի ժամանակ ինքը՝ Հաջի-Բէկատաշ
Խօրասանին:

Ես ճաշակեցի բարայի մօտ «ալբանական» իրաղաղութիւ-
նը», իմանալով թէ ինչ գնով է այն գնուած: Այս մի քանի օ-
րավար բուրալից ու խաղախ հողաբամնի համար քանի ճանա-
պարհներ են արիւնով ցօղուած, որքան ճիչեր, որքան կոփներ
մի արօտատեղի սահմանին, որքան ատելութիւն! Ահմէդ Ալի-բա-
րան եր թէքքէի խորքերում ձեռքի մէջ պահում է ինտրիգանե-
րի թելերը: Եր երկիւզած շունչը բորբոքում է ատելութիւննե-
րը և մղումն է տալիս կռազներին Սակայն այստեղ՝ խաղա-
ղութիւնն զրկում նա հնչում է վարդերի անուշահոտութիւնը և
քաղում է ելակները:

Կալկանդելենից դէպի Պրիզըրենդ Զարդ-Դաղե կիրճե-
րով տամներկու ժամ պէտք է գնալ հեին:

Մի զափթիէ, որ տանում էր մի գող Պրիզըրենդից Կալ-
կանդելեն, իր բանտարկեալի հետ սպանուել է Զարի կիրճերում:
Լեռնականները ժանդարմ չեն սիրում և ատում են գողերին:
Երկու դիակն էլ կողոպտուած էին. տարել էին նրանց գօտի-
ները, շորերը և կօշիկները. մեռելից գողանալը ըստ ալբանա-
կան օրէնքի զողութիւն չէ համարում, ահա թէ ինչու եթէ մէ-
կի ունեցածը զրաւում է ալբանացուն, սպանութիւնը դառ-
նում է նրա առաջին պարագը:

Վիշալը՝ թառած լերան կատարին՝ երկու անդունդի վրայ,
նայում է երկու կողմից մինչև կիրճի խորքերը, ուր ամեն ինչ
պիտի կատարուի իր աշքի առաջ, Առանց մինարէի ու պարտէզ-
ների, առանց անասունների, չունենալով նոյն իսկ կաղամբի
մի փոքրիկ մարդ, առանց հաճարի մի հատիկի, թագյնելով
իր կանանց, որ բնական է, ծածկելով նաև իր երեխաններին,
ոս մի ամիւրտաւան գիւղ է, աւաղաների մի որչ: Պրիզըրեն-
դի և Կալկանդելենի ջորեալանները, Վարդարի ձիաւոր փայտա-
վաճանները, Կուցօվալախի հովիւնները, որոնք ամառը թափառում
են բարձր արօտատեղերում, նրան վճարում են ճանապարհի
հարկ:

Պրիզըրենդը կարող էր լինել մի օպերետային հանրապե-
տութիւն, եթէ ալբանական խումբը այնաեղ զրամաներ չը
խաղար: Ամբողջ եւրոպական-թիւրքիայում սրանից սիրուն և
սրանից ուրախ ոչինչ չը կայ:

Պրիզըրենդում մի ալբանացի՝ Շամիդ-Բէյը՝ մի օր իրան
յայտարարել է քաղաքապետ: Ոչ ոք նրան չէ նշանակել բայց և

ոչ ոք նրա այդ իրաւունքը չէ ժիսել, Քաղաքային խորհրդի ընտրուած անդամները զիւանի լաւ տեղը լուսամուտի առաջ թողել են նրան՝ հարկ եղած հաճոյախօսութիւններով, ապա հեռացել են զանլիճնց: Ռամիզի խումբը սարսափելի էր, նրա հանդէպ Սիցիլիայի մաֆիսն բարեգործական մի ընկերութիւն կարող էր համարուել: Տաս տարուց ի վեր նա կառավարում է քաղաքը օրինաւոր միջոցներով, որ ձեռք էր առել ասորինաւրար: Երբ հարկաւուները ըմբստութեան կամ վատ տրամադրութեան փոքրիկ նշան են ցոյց տալիս, նա սպառնում է կանչելու քջակայ ցեղերը: Նրա զիլսաւոր կապերը օսորօզուրերի հետ է, զարհուրելի մարդիկ, որոնք Պրիզը բնդից մի քանի ժամ հեռու զրաւած ունեն սպիտակ Դրենի կողմից լեռնային մի գոգ, որի միակ մուտքը խիստ նեղ մի կիրճ է:

Հատ-հատ կամ խմբերով օստրօզուրերը իջնում են Պրիզը բնդի: Քաղաքապետի բարձր հովանաւորութեան տակ, որի կլինանաներն են, նրանք թալանում են կրպակները և կողոպտում քաղաքացիներին: Այս շահագործութիւնը միշտ առանց դժուարութիւնների չէ անցնում, Կաթառ շեղը նրանց դէմ կատաղի մրցութիւն է վարում: Անցեալ տարի հազար կարաչներ զըրաւել էին մի թաղը, մի քանի շարաթ պէտք էր նրանց կերպարել և կատարել բոլոր քմահաճոյքները: Քաղաքայիք ստիպուած եղան արդարադատութիւն ինդիրել Պօլսում: Իայց սուլթանը միջամտեց կարաչներին իրաւունք տալու համար: Կարաչների պետն էր Ռուսաէմ-ըէյը, որին նրանք ընտանիքար Ռուսատ էին կոչում: Տէր հարթավայրին, ինչպէս Ռամիզը քաղաքին, մի գեղեցիկ օր նա յայտարարել էր, թէ «Ես եմ տասաննորդների տէրը»: Այն ժամանակից նա տասաննորդ էր հաւաքում առանց մի պիտառ պետական արկլը զցելու: Նա իւրացնում էր բոլորը: Եւ նա յոյս ունէր այսպէս շարունակել երկար: Նա լաւ չէր ճանաչում Թիւրքիսն: Առհասարակ թիւրքական կառավարութիւնը թոյլ է տալիս, որ իրան կողոպտեն, բայց պաշտօնեաները, որոնք կայսրութեան մէջ զորութիւնից բացի ուրիշ զեր չունեն, աւելի սակաւ համբերողութեամբ են տանում գողութեան մրցութիւնը: Պաշտօնական հարկահանները՝ հալածուած Ռուսաէմից, բարձր տեղերում ունէին պաշտպան գողակիցներ: Իլդիզի և Բարձրագոյն-Դրան մարդիկ այս պաշտպանները զրկուած իրանց բաժին տասաննորդից՝ աղաղակ բարձրացըրին: Եւ սուլթանը թոյլ տուեց ձերբակալել Ռուսատ կարաչն, երբ նա մի օր մենակ կը գայ Պրիզը բնդի շուկան: Ռուսատն բանուեց և ուղարկուեց Պօլիս:

Կարաչները զէնքը ձեռներին վազվեցին Պրիզը ենդի
թաղերում:

—Տուեք մեզ մեր բէյն, ոռնում էին նրանք, յետ տուեք,
թէ չէ մենք կրակ կը տանք քաղաքը:

—Ձեր տեղերը դարձեք և գուք կ'ունենաք ձեր բէյը, պա-
տասխանում էր միւթեսերի ֆը:

—Ուրիշներին ասացէք Ստամբուլի ստերը! ի՞նչ էք արել
դուք Ռուսակին:

—Ռուսան գնացել է ուխտ, երկու երեք ամսից յետոյ կը
վերադառնայ Մերքայից հաջի:

—Եյդ էլ սուտ է! Ռուսակի համար զրօշ չ'արժեն Մերքան
և զլիսի կանաչ փաթետոցը: Ալբանական սպիտակ գլխարկը
միայն կը ծածկէ իր ճակատը մինչև կեանքի վերջը: Կրակը
պատրաստ է, և գուշուտով կը մեռնես, ասա, ուր է Ռուսան:

—Նա Ստամբուլում է, Մեր տէրը—և թող Աստուած պահ-
պանէ նրան—մեր տէրը իր անսպառ բարութեամբ նրան տեղ
է տուել իր գանի առաջ թիւվէնքիների մէջ (թիկնապահ):

Թիկնապահ բառը լսելիս՝ խմբի աղաղակները դադարում
են: Ռուսան թիւվէնքի! որպիսի պատիւ կարաչների համար:
Սուլթանի անձնական պահակախմբի մէջ ընկնելու համար հար-
կաւոր է ամբողջ կեանքում կողոպուտներով պարապել ան-
տառներում, կամ աղնաւական լինել՝ չնորհիւ ճանապարհ փա-
կող մի քանի սերունդ նախնիների աւագակութեան: Սուլթա-
նի պատոյ պահակախմբը թիւրքական աւագակութեան ա-
կադեմիան է. Ռուսան թիւվէնքի! Սա շատ լաւ է!.

Օստրօղուների և կարաչների մերձարութիւնը բնակա-
նապէս խռովում է Պրիզը ենդի օրերը, ևս առաւել նրա զի-
շերները: Արեի մայր մտնելուց յետոյ խոսեմ մարդիկ տներից
դուրս չեն գալիս: Մենք էլ չենք իշխում զօսանքի դուրս գալ,
թէ շապկա-արամներ ենք, այսինքն եւրոպական զլիսարկով
մարդիկ: Ութ տարուց ի վեր Պրիզը ենդը սերբիական սեմինա-
րիայի ուսուցչի կակուղ թաղեքէ զլիսարկից բացի չէ տեսել և
ոչ մի շապկա-արամ: Մեր երեք զլիսարկները տեսնելուն պէս
բացականչեցին: «Ահա մեծ պետութիւնների ուղարկած մի
յանձնաժողով!»

Պրիզը ենդն ապրում է այն մշտական համոզմունքով—
հիւսիսային և հարաւային Ալբանիան էլ նրա հետ—որ ամբողջ
Եւրոպայի համար ալբանացիների կոփները միջազգային քա-
ղաքականութեան հանդույցն են կազմում:

—Սրանք երեխաներ են! ասում է մեզ ոռւսաց փոխհիւ-
սատոսը, որ առանց պաշտօնական զլիսարկի երբէք դուրս չի

գալիս. — օգտուեցէք նրանց ֆանտազիայից, այլապէս երբ նկատեն իրանց սխալը, ձեզ կը հալածեն ձեր զլիսարկների հետ մէկ տեղ:

**

Մի քանի օր առաջ Պրիզրենդ եկաւ մի նոր սատիկանապետ: Խեղճ մարդ, իր նախորդն ստիպուած էր հեռանալ գիշերով, կառք նստել դաշտում և փախչել ինչպէս զող. մի ուրիշ նրանից առաջ քաղաքից գուրս էր եկել իր զինուած ստորագրեալների երկու շղթայի միջից, որոնք գէպի գետին էին ուղղել իրանց հրացանների փողերը, որ Ալբանիայում նշանակում է աքսոր: Սյստեղ ուղարկուած բոլոր սատիկանապետները մեկնում են երեք ամսից յետոյ, մէկը միւսի յետեից նրանք համառում են երկաթուղավ Վերիզովիչ կայարանը: Եւ եթէ դիպուածով սրանցից մէկը սովորական ժամանակից աւելի է մընում, սուլթանը նրան յետ է կանչում, կարծելով՝ որ ոչ ոք առանց իր տիրողը դաւաճանելու չէ կարող Պրիզրենդի ալբանացիներին գուր գալ:

Դրութիւնն աւելի ծանրացել է այն ժամանակից, երբ Բամիզ-բէյը Բամիզ-Փաշա դարձած՝ ինտրիգներ է սարգում Ելբազ-Քէօսկում թիւվէնքչիների միջոցով և խոռոշում է քաղաքն ու երկիրը կոխւներով և հաղար ու մի «արեան» բաներով, իրական կամ մտածածին: «Արիւնը» առաջնակարդ տեղ է բոնում ալբանական գործերում: Կան «արեան բարեկամներ», «արեան եղբայրներ», «արեան խոռովութիւն», մէկը «արեան պահանջունի» միւսից, կամ «արիւն է պարտ» իր թշնամիներին, կամ նրանք են իրան արնապարտ: Ցեղից՝ ցեղ, մարդից՝ մարդ մի մըշտական արեան կոխւ է (ժիակ) կամ արեան խաղաղութիւն (թեսսա), արիւնը ալբանական օրէնքի (աղէթ) սկիզբը և վախճաննն է և միակն է, որ ճանաչուած է Դրենի ամբողջ աւազանում: Մի զողացուած ոչսարի, երկու հովիւների աննշան կուի համար շատ անդամ ցեղերը կուել են տաս տարի շարունակ: Քանի դեռ վերջին սպանուածի վրէմն ստուած չէ, իր ցեղի և ազգականների պատի վրայ բիծ կայ, հէնց որ վրէմխնզրութիւնը յաղեցաւ, պատի բիծը անցնում է հակառակ բանակի վրայ, և այն սըրբելու համար դարձեալ արիւն է հարկաւոր: Սյսպէս կը շարունակուէր անվերջ, թէ հնարած չը լինէին բէսսան, որ Աստծոյ կամ աւելի ճիշտ՝ սուլթանի դաղարն է:

Ալբանիայում այն ժամանակից, երբ Աբդիւլ-Համիդը սկըսեց իր թիւվէնքչիները վերցնել Գերարիայի այս մեծ երեխաներից, նրա ամբողջ քաղաքականութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հսկել ժիակների (արեան կոխւ) վրայ և միջամտել բհսսայի ժամանակ:

Սուլթանը լաւ է զնահատում այս պրետօրիաներին, ո-
որոնք մի հարկուր պիտարի կամ մի ժապաւէնի համար գի-
տեն սպանել և սպանուել: Բայց նա զիտէ նոյնպէս, թէ որքան
անյարմար է իր յարկի տակ տանել այս լեռնականներին,
որոնք բերում են հետաքրն իրանց վրէժինդրութիւնները և
արեան հաշիւների խիստ պահանջները: Իր տանը խաղաղու-
թիւն ունենալու համար նա աշխատում է հաշտեցնել իրար
գէմ դուրս եկած լեռնականներին: Ալբանացիք ընդունում են
Արդիւլ-Համբիդի միջամտութիւնը, ինչպէս կ'ընդունէին Թրանց-
Յովգէփ կամ Նիկոլայ Արք կայսրներինը, առանց զարմանքի և
առանց իրանց երախտապարտ զգալու: Նրանք հաւատացած են,
թէ իրանց կախներով խռովում են ամբողջ աշխարհը, ուստի
ընական են գտնում, որ ժամանակ առ ժամանակ մարդկութիւ-
նը հանգիստ պահանջէ և որ աշխարհի տէրերից մէկը նրանց
խնդրէ, որ թողնեն թոյլ պետութիւններին մի փոքր հանդիսա-
շունչ քաշել:

Պօլսից ուղարկուած «արեան յանձնաժողովը» գալիս է
Պրիգրենդ, Խղուկ կամ Դիբակօֆօ: Բամիդ-փաշան միշտ գործի
մէջ է: Հեռու Սաամրուլում հաւատացած են, որ ամբողջ ըս-
տիակալ Դրենը նրա ճնշող ազդեցութեան տակ է: Եւ ոստի-
կանապետը միայն Բամիդ-փաշայի միջոցով է բերել տալիս զա-
նազան ցեղերին համակերպ արեան գինը, որ Արդիւլ-Համբիդը
վճարում է: Բայց Բամիդը պահում է բոլոր փողը իր քաղաքա-
պետութեան ներքնատանը, եթէ ոստիկանապետը ձայն հանեգ,
Բամիդը նրան աքսորում է: Բամիդը աւելին է անում. նա ար-
հեստական ձեռվ առաջ է բերում ցեղային վրէժինդրութիւն-
ներ կուխներով, սպանութիւններով և միջամտութիւններով:
Դերակատարները—օստրօգուրները, Կարաչները և ուրիշները նրա
հետ բաժանում են արդիւնքը: Բամիդը հզօր է: Սակայն նրա իշ-
խանութիւնը կարծես դիմում է դէպի անկում, որովհետեւ կա-
մաց-կամաց Պրիգրենդի համբերութիւնը հատնում է: Կազ-
մուած է «կարգի բարեկամների» մի կուսակցութիւն, որ ըս-
տիանում է կանչել ջումանցիներին՝ ամենքին կոտորելու և ա-
ամեն ինչ աւերելու համար, եթէ կարաչներն ու օստրօգուր-
ները շարունակեն կոտորածն ու աւերածը: Այս նոր «պօլիտի-
կանները» վճուղ են իրանց բողոքը անմիջապէս սուլթանի գանի
առաջ զնել: Նրանք ուղարկել են մի հեռագիր ուղղակի սուլ-
թան Արդիւլ-Համբիդին: Տասնեհինգ օր անյնում է առանց պա-
տասխանի, նրանք հեռագրում են երկրորդ, երրորդ, յետոյ չոր-
րորդ անգամ: Ոչ մի պատասխան չը ստանալով՝ նրանք ընտրում
են քսանիչորս պատգամաւոր իրանց մեծաւեծներից, որոնք

Ներկայացնում են քաղաքի քսանեչորս թաղերը: Ընտրուածները գնում, տեղաւորւում են հեռազբատանք: Նրանք նախ քերել են տալիս իրանց նարպիլէները, յետոյ կերակուրը, վերջապէս անկողինները: Այժմ նրանք այնաև են պակում, որպէսզի պատասխանը շուտ ստանան: Այսպէս նրանք կարծում են անմիշական յարաբերութեան մէջ լինել աշխարհի տիրոջ հետ: Իրանց միամտութեան մէջ նրանք անկարող են իմանալ, որ իւսկիւրում նահանգապետը բռնում է բոլոր նրանց հեռազբերը: Այս օրինակելի պաշտօնեան ինքն է ամեն օր իր կողմից հեռազբիր կազմում և ուղարկում սուլթանին, նրան ասելու համար, որ իր բարեխնամ հովանաւորութեան տակ այդ վիլայէթի ընակիչները հիացմունք են յայտնում իրանց վիճակի համար: Սակայն լուսում է, որ սուլթանը Պրիզրենդ է ուղարկում մի նոր սատիկանապետ: Սա համում է: Նրան դիմաւորում են անհամբեր հարցերով: Նա չը գիտէ էր թէ բանն ինչումն է և կարծում է, թէ իրան դիտմամբ ուղարկել են գմերի մէջ որպէս պատիժ: Նրանց հետ վարւում է քաղցրութեամբ, ներոզութիւն ինդրում, բայց ի զուր, չորս կողմից զուում են, թէ նա ձեանում է անգէտ, և սպառնում են փակել շուկան: Ալբանական որեէ քաղազաքում շուկան փակել, խանութների դռները գոցել նշանակում է կառավարութեան գէմ դուրս դալ: Մեր համելունախընթաց օրը պրիզրենդցիք որոշել էին փակել շուկան: Միայն ի յարգանս մեր զլխարհների, Երոպայի ներկայացուցիչների է, որ այսօր շուկան մնում է բայ:

* * *

Ես ուզեցի ձի վարձել, գնալ իպեկ և Դիակօֆո, բայց ձի չը ճարուեց, մէկը «կանաչի էր ընկած», միւսի ոտքն էր վիրաւորուած: «Կառք վիրոցէք», ասաց ինձ զնդապետը: Բայց ճանապարհ չը կայ, հազիւ մի շաւիդ: Գնդապետը չէ ուղում, որ ես գնամ սպիտակ Դրեն: Ռամիդ-վաշան չէ կամենում, որ ես այցելեմ իր ցեղերին, Պրիզրենդցիք չեն ցանկանում, որ ես շարունակեմ մնալ իրանց հանրապետութեան մէջ: Իւսկիւրի հանդապետը և Բարձրադին Դուռը վճռել են իմ առաջ ճանապարհ փակել: Այս չըկամութիւնը իր հիմունքները՝ համարեա իր մեզմացուցիչ պատճառներն՝ ունի:

Չը կարողանալով այցելել իպեկը և Դիակօֆն, մենք մնում ենք Պրիզրենդ այնքան ժամանակ, որքան ալբանական փանտազիան կը ցանկանայ տանել մեր ներկայութիւնը:

Պրիզրենդի մի թաղում հազար սերբ տուն կայ Զար լեռան կողքին կպած: Իւրաքանչիւր սերբ ընտանիք ալբանացիք մի տէր ունի, որ նրան հովանաւորում է՝ վոխարէն սուրբերի,

կոռ ու բէգեապի, սովորական ընծաների, տասանորդի, գողութեան, առանց հաշելու կալուածատիրական իրաւունքը, որ մոռմ է որպէս այստեղի սօցիալական դաշնադրութեան (contrat social) յօդուածներից մէկը: Այսպէս մի քանի տարի առաջ Խսակ-բէյը ուղարկում է իր որդուն՝ Պաւլիչ անունով մի սերբի մօտ նրան ասելու: «Իմ հայրը տեսել է քո կնոջը և հաւանել: այժմ ուղում է նրան, ուղարկիր»: Միենոյն ժամանակ երիտասարդը տեսնում է սերբի աղջկան, ուստի աւելացնում է: «աղջիկդ էլ կ'ուղարկաս ինձ համար»: Քանիչորս ժամ յիտոյ Խսակը հրամայում է ասել: «Դու չ'ուղարկեցիր քո կնոջը, լաւ! այժմ փոխարէնը կ'ուղարկես հինգհարիւր ֆրանկ և քո աղջիկը իմ որդու համար»: Սերբը իր աղջականներից պարտք վերցնելով հինգհարիւր ֆրանկ՝ տալիս է, իսկ աղջկան թագցնում է մի քահանայի մօտ: Երիտասարդ ալբանացին զալիս է և չը գտնելով աղջկան՝ վերցնում է կնոջը: Ապա բէյը խում է սերբի արտերը, տանում է կահկարասին, պահանջում է ահաղին ֆրկանք, և վերջապէս Պաւլիչը ստանում է ոտքի մի այնպիսի հարուած, որ մեռնում է: Խսակ-բէյը Պաւլիչի պատրոնն էր:

Սերբերը Պրիզըրենդում ունեն եպիսկոպոս և մի օրթոդօքս սեմինարիա:

Ռուսական փոխհիւպատոսը պաշտպանում է նրանց, աւստրիական մի պաշտօնեայ պաշտպանում է կաթոլիկ ալբանացիներին, սակայն աւստրիական աղենտը ոստիկանապետին արած իր մի պաշտօնական այցելութեան ժոմանակ քիչ էր մնացել սպանուէր պահապանի ձեռքով: Սերբերն էլ թուլամորթ չեն և ի հարկին իրանք իրանց պաշտպանել զիտեն: Բիստրիցայի ափին մի քանի ամսից ի վեր ամեն օր կարելի է տեսնել մի պառաւ մահմէդական կին, որ ագռաւի աղաղակներ է արձակում՝ վտիս ձեռները շարժելով, որովհետեւ նրա որդուն սպանել է մի սերբ: Այս սերբը ջահիլ էր և սիրուն, իսկ սպանուած մահմէդականը Ստամբուլից բերել էր գարշելի սովորութիւններ. նրանց մէջ մի անգամ մի խանութում կոիւ սկըսուեց զանակով. մահմէդականը սպանուեց: Երկու ամիս շարունակ ոստիկանութիւնը և սպանուածի աղջականները հղուր վիճրեցին մարդասպանին. նա կարողացաւ փախչել դաշտերը. իսկ պառաւը շարունակում է վրէմնդրութիւն աղաղակել:

Պրիզըրենդի շրջանը՝ այս Հին-Սերբիան Հայաստանի հետ աշխարհի ամենաղժեքաղդ երկիրն է: Ալբանացիք իրանց լեռներից իջնելով՝ կայսերական իշխանութիւնից իրաւունք են ըստացել ապրել ի հաշիւ սերբ զիւղացիների և ոչնչացնել ամեն

ինչ: Ուզում են ջնջել այս ցեղը (սերբիական), որ կարող է օրինաւոր ճանաչել Ալեքսանդր թագաւորի (Սերբիայի), Աւտորիացի և Մօնտենեգրով իրաւունքները: Պրիվառենդի շուրջը ալբանական օրէնքը ամենակարող է: Քրիստոնեաները՝ որպէս նշան ստրկութեան՝ պարտական են իրանց մագերը կարել: Նրանք իրաւունք չունեն ձիով մանել որեէ քաղաք և ոչ էլ ձիու վրայ մնալ, երբ դաշտում պատահում են որեէ մուռուլմանի: Ամեն տեղ նրանց գերեզմանատների պատերը հողին հաւասարեցրուած են. քրիստոնեաները այդպիսի արտասուելի կեանքից յետոյ էլ իրաւունք չ'ո՞նեն մի խաղաղ անկիւն ունենալու:

Միտրովիցայում Հիսոս Բօլմետինացը յայտարարում է, թէ ինքը սպանելու է ուռուաց հիւպատոսին, հէնց որ վերջինս համարձակուի պաշտօն ստանձնել: Անցեալ տարի նոյն Հիսոսն երեք հարիւր մարդու գլուխ անցած՝ մի օր յարձակում է Կօլաշին գիւղի վրայ, կողոպառում է և փրկանքի ենթարկում: Նահանգապետը նրան բարեկամական նկատողութիւններ է առում. Հիսոսն պահանջում է փաշայի տիտղոս, որ շասպում են խոստանալ նրան: Իր որդին 1902 թւի յունիսի 4-ին ստիպում է հարթավայրի քրիստոնեաներին խնդրել սուլթանից իր ոշխարների տուրքի որոշ զիջում: Սուլթանը՝ ինչպէս և սպասելի էր՝ մերժում է. այն ժամանակ ալբանացին պատժում է քաղաքը՝ արգելելով նրա ելքն ու մուտքը: Քաղաքը սովոր տանջուեց՝ ինչպէս պաշարուած:

Սպանութիւններ, առևանգումներ, արիւնանեղ արշաւանքներ, ահա Հին-Սերբիայի ամենօրեայ քրօնիլր: Թիւրքական իշխանութիւնը օժանդակում է այդ բոլորին: Մի խեղճ սերը աշջիկ հարիւր յիսուն օրից ի վեր բանտումն է այն պատճառով՝ որ նա զիմազրել էր մի բէյի, որը փախցրել էր այդ աղջկան հէնց վերջինիս հարսանիքի ժամանակ: Իր ազատութիւնն ու իր նշանածը վերսանալու համար նա միայն մի հնար ունի— զիջել բէյին: Քեազիմ աւազակը՝ ահա երկու տարի է՝ ինչ ապրում է որպէս պարազիտ ի հաշիւ երեք զիւղերի, որոնց նա սարսափի տակ է պահում և փրկանքի ենթարկում: Գիւղացիները բողոքեցին, թիւրք նահանգապետն ուղարկեց ժանդարմներ, Քեազիմը նրանց հրաւիրեց մի օրգիայի, որ կազմուեց քրիստոնեաների զինով, պաշարեզնով և կանանցով:

Միարօվիցայում երկու եղբայրներ, երկումն էլ սոտիկանական սպայ, մանում են մի քրիստոնէի տուն, ուր կատարում է հարսանիք. նրանք ատրճանակներով սպանում են այնքան մարդ, որքան կարող են և բռնարարում են կանանց. սա այս

երկրում հանագ է! Այսպէս է մի հատիկ օրուայ քրօնիլը,
թիւրքերը վճռել են այս դաշտում ջնջել քրիստոնեայ ազգա-
քընակութիւնը....

ԺՕՐԺ—ԳՈՂԻԻ

(Թարգմ. Ա., Ա.)
